Հավելված
ՀՀ կառավարության 2017 թ.
նոյեմբերի 30-ի նիստի N 50
արձանագրային որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԲՆԱԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՑՎՈՂ

ՎՆԱՍՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Միջոցառման անվանումը	Միջոցառման նկարագիրը	Ակնկալվող արդյունքը	Պատասխանատու կատարողները և համակատարողները	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը	Ֆինանսավորումը
1. Սերմնաբուծության, սերմարտադրության, սերմապահովվածության և տնկարանային տնտեսությունների զարգացման ծրագրերի իրականացում	Սերմնաբուծության զարգացման ծրագրերի շարունակում և այս բնագավառում տեղական հնարավորությունների օգտագործման ընդլայնում, մասնավորապես. - Արարատյան հարթավայրի և նրա նախալեռնային գոտու համար նոր կայուն սորտերի ստեղծում և նոր առաջավոր տեխնոլոգիաների կիրառմամբ տեղանքի եղանակային պայմաններին հարմա-	Բարձր բերքատվությամբ, արտադրանքի որակական հատկանիշներով, ցրտադիմացկունությամբ, երաշտադիմացկունությամբ և հիվանդությունների ու վնասատուների նկատմամբ բարձր կայունությամբ սորտերի ստեղծում: Բարձր վերարտադրության սերմերի օգտագործման ծավալների ընդլայնում, կոնդիցիոն սերմերի վերարտադրության ապահովում, բույսերի նոր բնակլիմայական պայմաններին հարմարվող սորտերի կազմի ընդլայնում: Բուսաբուծության ճյուղի ինտենսիվացման	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2017-2022 թթ.	ՀՀ պետական բյուջե ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	ՀՀ պետական բյուջեով նախատեսվող գումարների չափով

Միջոցառման անվանումը	Միջոցառման նկարագիրը	Ակնկալվող արդյունքը	Պատասխանատու կատարողները և համակատարողները	Կատարման ժամկետը	Ֆինանսա-վորման աղբյուրը	Ֆինանսավորումը
	րեցված բարձր վերար-տադրության սերմերի արտադրության կազ-մակերպում, - աշնանացան ցորենի, գարնանացան ցորենի, գարնանացան գարու և հատիկաընդեղենի, հանրապետության լեռ-նային և նախալեռնա-յին գոտիների համար ցրտադիմացկուն, երաշտադիմացկուն, հիվանդությունների և վնասատուների դեմ առավել կենսունակ, նոր կայուն սորտերի և բարձր վերարտադրու-թյան սերմերի արտադրության կազմակերպում, - բարձր վերար-տադրության հացահա-տիկային մշակաբույ-սերի սերմերի արտա-դրության ընդլայնում, - բանջարբոստանային	պայմանների ստեղծում, մշակա-բույսերի բերքավության բարձ-րացում, բուսաբուծական մթերք-ների արտադրության ծավալների ավելացում, բուսաբուծական արտադրանքի մրցունակության, սերմնաբուծության բնագավա-ռում երկրի անկախության մակարդակի բարձրացում:				

Միջոցառման անվանումը	Միջոցառման նկարագիրը	Ակնկալվող արդյունքը	Պատասխանատու կատարողները և համակատարողները	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը	Ֆինանսավորումը
	մշակաբույսերի տեղական ցրտադիմացկուն, հիվանդությունների և վնասատուների նկատմամբ կայուն սորտերի սերմարտադրության կազմակերպում: Տնկարանային տնտեսությունների ստեղծման խթանում և գործողների գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծում:					
2. Սերմերի որակի ստուգման և պետական սորտափորձարկման ծրագրի իրականացում	Հանրապետությունում բույսերի նոր սորտերի արտոնագրման և օգտագործման գործընթացի կանոնակարգում, սելեկցիոն նվաճումների իրավական պաշտպանություն, բնակլիմայական	Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային ցածր որակ ունեցող սերմերի օգտագործման կանխում: Տարեկան 10-15 սելեկցիոն նվաճումների (սորտերի և հիբրիդների) շրջանցման և օգտագործման թույլտվության ձևակերպում: Գյուղատնտեսական մշակա-	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2017-2022 թթ.	ՀՀ պետական բյուջե	ՀՀ պետական բյուջեով նախատեսվող գումարների չափով

Միջոցառման անվանումը	Միջոցառման նկարագիրը	Ակնկալվող արդյունքը	Պատասխանատու կատարողները և համակատարողները	Կատարման ժամկետը	Ֆինանսա-վորման աղբյուրը	Ֆինանսավորումը
	տարբեր գոտիներում մշակության երաշխավորվող բույսերի սորտային կազմի ընդլայնում, ցանկատարածությունների ֆիտոսանիտարական վիճակի վատթարացման, հիվանդությունների, վնասատուների զանգվածային բազմացման կանխարգելում: Նախատեսվող միջոցառումներ են՝ սորտային նույնականացման աշխատանքների իրականացում, սերմերի խմբաքանակներից նմուշների ընտրություն, սերմնանմուշների լաբորատոր փորձարկումների կազմակերպում:	բույսերի բերքատվության բարձրացում, ճյուղի ինտենսիվացում:				

Միջոցառման անվանումը	Միջոցառման նկարագիրը	Ակնկալվող արդյունքը	Պատասխանատու կատարողները և համակատարողները	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը	Ֆինանսավորումը
3. Բույսերի պաշտպանության միջոցառումների ծրագրի իրականացում	Գյուղատնտեսական մշակաբույսերի առավել վտանգավոր վնասատուների՝ մկնանման կրծողների, մորեխների և անտառի վնասակար օրգանիզմների դեմ քիմիական պայքարի աշխատանքների իրականացում: Ծրագիրն իրականացվում է գնահատելով բուսասանիտարական մոնիթորինգի փաստացի արդյունքները, որի միջոցով հանրապետությունում կատարվում է բույսերի վնասակար օրգանիզմների տարածման արեալների ճշտում, կանխատեսում, պայքարի ճիշտ ժամ-	Վնասատու օրգանիզմների կողմից հասցված վնասի տարածման արեալի նվազեցում, գյուղատնտեսական մշակաբույսերի համար խիստ վնասակար օրգանիզմների մասսայական տարածման կանխարգելում, գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացում, բուսասանիտարական կայուն վիճակի ապահովում:	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2017-2022 թթ.	ՀՀ պետական բյուջե	ՀՀ պետական բյուջեով նախատեսվող գումարների չափով

Միջոցառման անվանումը	Միջոցառման նկարագիրը	Ակնկալվող արդյունքը	Պատասխանատու կատարողները և համակատարողները	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը	Ֆինանսավորումը
	կետների ահազանգում և մասնագիտական աջակցություն հող-օգտագործողներին:					
4. Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման ծրագրի իրականացում	Հողերի ագրոքիմիական քարտեզագրման միջոցով բերրիության փոփոխությունների բացահայտում և դրա վատթարացումը կանխելու միջոցառումների ձեռնարկում: Ծրագրով նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները. -գյուղատնտեսական նշանակության հողատարածությունների ագրոքիմիական դաշտային հետազոտություններ (հողանմուշների նմուշառում), - հողանմուշների լաբո-	Ծրագրի իրականացումն ուղղված է գյուղատնտեսության ոլորտի հողերի բերրիության պահպանման և բարձրացման ընդհանուր նպատակի իրականացմանը՝ պարարտանյութերի խնայողաբար, արդյունավետ և էկոլոգիապես անվտանգ օգտագործման միջոցով: Հիմնավորված պարարտացման սխեմաների կիրառման միջոցով գյուղատնտեսական նշանակության հողերի վիճակի բարելավում, գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացում: Ծրագրի իրականացման արդյունքում յուրաքանչյուր տարում ակնկալվում է ստանալ հանրապետության հա-	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2017-2022 թթ.	ՀՀ պետական բյուջե	ՀՀ պետական բյուջեով նախատեսվող գումարների չափով

Միջոցառման անվանումը	Միջոցառման նկարագիրը	Ակնկալվող արդյունքը	Պատասխանատու կատարողները և համակատարողները	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը	Ֆինանսավորումը
	ռատոր փորձաքննություններ և գնահատում, - ագրոքիմիական քարտեզների կազմում և համայնքներին հանձնում, - մշակաբույսերի պարարտացման գիտականորեն հիմնավորված երաշխավորագրերի կազմում և համայնքներին հանձնում:	մայնքների 1/5 մասի հողերի սննդատարրերով ապահովվածությունն արտացոլող և պարարտանյութերի պահանջարկի համար ագրոքիմիական քարտեզներ, մշակաբույսերի պարարտացման համար գիտականորեն հիմնավորված և կազմված երաշխավորագրեր:				
5. Աշխարհագրական թվայնացված համակարգի (ԱԹՀ) ներդրման ծրագրի իրականացում	Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի լիարժեք քարտեզագրում, առկա հողատեսքերի, դրանց ֆիզիոլոգիական վիճակի, տեղի ունեցող աշխարհագրական գործընթացների, գյուղատն-	Հողերի ֆիզիկական և իրավական կադաստրի առկայություն, որը կներառի առկա հողատեսքերի տվյալները, դրանց վիճակը: Ծրագիրը հնարավորություն կտա ստանալ տեղի ունեցող աշխարհագրական գործընթացների վերաբերյալ տեղեկատվություն, կլիմայի ազդեցության, գյուղատնտեսական նշանակու-	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2017-2019 թթ.	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	

Միջոցառման անվանումը	Միջոցառման նկարագիրը	Ակնկալվող արդյունքը	Պատասխանատու կատարողները և համակատարողները	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը	Ֆինանսավորումը
	տեսական կուլտուրաների տարածքների և դրանց կառուցվածքի վերաբերյալ տեղեկատվության մշակում:	թյան մոնիտորինգային տվյալներ (օրինակ կարկտահարության վնասի վերաբերյալ):				
6. Կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման պիլոտային ծրագրի մշակում և իրականացում	Ծրագրի իրականացմամբ նախատեսվում է պետական աջակցություն ցուցաբերել ոռոգման արդյունավետ համակարգերի (կաթիլային ոռոգման) ներդրման գործընթացում՝ նպատակային վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման միջոցով բարձրացնելով վարկավորման մատչելիության մակարդակը և արդյունքում խթանելով համակարգի	Պայմաններ կստեղծվեն հանրապետության գյուղատնտեսությունում կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման և շահագործման համար, արդյունքում՝ շահառու տնտեսություններում կապահովվի ջրի հավասարաչափ բաշխում և ջրի տնտեսում շուրջ 40%-ով, բերքատվության աճ, բարդ ռելիեֆ ունեցող հողատարածքների ոռոգման հնարավորություն, ոռոգման կազմակերպման աշխատանքային ծախսերի զգալի կրճատում: Ծրագրի իրականացումը կնպաստի նաև խախտված հողատեսքերի՝ գյուղատնտեսության մեջ ներգրավմանը: Ոռոգման ջրի	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2018-2022 թթ.	ՀՀ պետական բյուջե	ՀՀ պետական բյուջեով նախատես-վող գումարների չափով

Միջոցառման անվանումը	Միջոցառման նկարագիրը	Ակնկալվող արդյունքը	Պատասխանատու կատարողները և համակատարողները	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը	Ֆինանսավորումը
	ներդրումը:	կորուստների կրճատման, ոռոգման նորմայի կտրուկ իջեցման, սնուցման ռեժիմի բարելավման շնորհիվ մշակաբույսերի բերքատվության և բերքի որակի բարձրացում, հողօգտագործողների եկամուտների ավելացում:				
7. Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի իրականացում	Գյուղատնտեսության ոլորտում տնտեսավարողներին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման մեխանիզմների վերանայում՝ վարկի գումարի, տոկոսադրույքի, դրա սուբսիդավորվող մասի, մարման ժամկետների, նախապայմանների մասով, նպատակ ունենալով շահառուների ուսուցումը, արդիական տեխնոլոգիաների ներդրումը, տնտեսությունների խոշորացու-	Գյուղատնտեսության ոլորտում կբարձրանա վարկունակ պահանջարկի մակարդակը, գյուղատնտեսության ոլորտի ներդրումային գրավչությունը, կընդլայնվեն գյուղատնտեսությունում տնտեսավարողների կարողությունները, սահմանված ժամկետում և պահանջներին համապատասխան կիրականացվեն գյուղատնտեսական մթերքների արտադրության կազմակերպման աշխատանքները, հնարավորություններ կապահովվեն ագրոտեխնիկական պահանջների կատարման, անասնապահությու-	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2017-2022 թթ.	ՀՀ պետական բյուջե	ՀՀ պետական բյուջեով նախատեսվող գումարների չափով

Միջոցառման անվանումը	Միջոցառման նկարագիրը	Ակնկալվող արդյունքը	Պատասխանատու կատարողները և համակատարողները	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը	Ֆինանսավորումը
	մը, վարկառուների ռեեստրի վարումը: Վարկավորման ժամկետը կսահմանվի մինչև 5 տարի, ելնելով ներդրումների ուղղվածությունից: Սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի տնտեսավարողներին և գյուղատնտեսական կոոպերատիվներին վարկերը տրամադրվեն 3 % տոկոսադրույքով, իսկ հանրապետության մնացած համայնքների տնտեսավարողներին՝ 5 % տոկոսադրույքով:	նում գյուղատնտեսական կենդանիների տոհմային և մթերատու հատկանիշների բարելավման, արտադրության արդյունավետության բարձրացման համար, կստեղծվեն հնարավորություններ գյուղատնտեսությունում արդիական տեխնոլոգիաների ներդրման, տնտեսությունների խոշորացման, վարկառուների ռեեստրի վարման միջոցով վարկավորման առաջնահերթ խնդիրների բացահայտման համար: Արդյունքում պայմաններ կստեղծվեն բնակլիմայական աղետների ռիսկերի մեղմման ուղղությամբ:				
8. Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ին-	Ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած, ինտենսիվ, 1-ից մինչև 10 հեկտար այգետնկումներ, 0.5-ից	Հանրապետությունում ինտենսիվ այգեգործության զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծում, արդյունքում՝ ինտենսիվ այգիների տարածքների ընդլայնում, արտադրանքի	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2018թ.	ՀՀ պետական բյուջե	ՀՀ պետական բյուջեով նախատեսվող գումարների չափով

Միջոցառման անվանումը	Միջոցառման նկարագիրը	Ակնկալվող արդյունքը	Պատասխանատու կատարողները և համակատարողները	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը	Ֆինանսավորումը
տենսիվ պտղատու այգիների հիմնման համար վարկային տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի մշակում և իրականացում	մինչև 5 հա հատապտղանոցների հիմնում կատարող տնտեսավարողներին պետական աջակցության շրջանակներում տրամադրվող վարկի տոկոսադրույքի սուբսիդավորում:	մրցունակության բարձրացում, արտահանման ծավալների ավելացում: Ծրագրի շրջանակներում հիմնված այգիներում կարկտահարությունից պաշտպանվածությունը կկազմի գրեթե 100%:				
9.Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսությունում հակակարկտային ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի իրականացում	Գյուղատնտեսությունում տնտեսավարողներին կարկտապաշտպան ցանցային համակարգերի ներդրման համար մատչելի պայմաններով կտրամադրվեն նպատակային վարկեր՝ վարկի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորմամբ:	Ծրագրի իրականացման արդյունքում՝ նախադրյալներ կստեղծվեն մատչելի մեխանիզմների կիրառմամբ խաղողի ու պտղատու այգիների և այլ տնտեսություններում հակակարկտային ցանցերի ներդրման համար, հանրապետության այգիների շուրջ 2.0 %-ը կպատվի կարկտապաշտպան ցանցաշերտերով, հակակարկտային ցանցեր կիրառած տնտեսավարողների մոտ գրեթե կբացառվի	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2018-2024 թթ.	ՀՀ պետական բյուջե	ՀՀ պետական բյուջեով նախատեսվող գումարների չափով

Միջոցառման անվանումը	Միջոցառման նկարագիրը	Ակնկալվող արդյունքը	Պատասխանատու կատարողները և համակատարողները	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը	Ֆինանսավորումը
		կարկուտի ռիսկը, կբարձրանա ապահովագրության համար գրավչությունը, կբարելավվի բերքի որակը, կավելանա տնտեսավարողների եկամուտները, նախադրյալներ կստեղծվեն ընդլայնված ծավալներով ծրագրի իրականացման համար: Հակակարկտային ցանցերով պաշտպանված այգիներում կարկտահարությունից պաշտպանվածությունը կկազմի գրեթե 100%:				
10.Պետական աջակցությամբ գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացում	Գերմանական զարգացման բանկի կողմից ներկայացված ծրագրային առաջարկի հիման վրա ապահովագրական համակարգի աստիճանական ներդրումն ապահովելու համար անհրաժեշտ է գյուղատնտեսության ոլորտում ապահովա-	Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի մշակված մեխանիզմների փորձարկում, մեխանիզմների կատարելագործման համար նախադրյալների ստեղծում: Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման հիմնական ծրագրի իրականացման համար նախադրյալների ստեղծում:	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայ-	2018-2020 թթ.	ՀՀ պետական բյուջե ՀՀ օրենքով չարգել-	ՀՀ պետական բյուջեով նախատեսվող գումարների չափով

Միջոցառման անվանումը	Միջոցառման նկարագիրը	Ակնկալվող արդյունքը	Պատասխանատու կատարողները և համակատարողները	Կատարման ժամկետը	Ֆինանսա-վորման աղբյուրը	Ֆինանսավորումը
	գրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացում: Փորձնական ծրագիրը նպատակահարմար է իրականացնել բուսա-բուծության ոլորտում, սկզբում ներառելով մեկ-երկու մարզ, կամ մարզի որոշ տարածա-շրջաններ՝ առավել հա-ճախ հանդիպող կարկ-տահարության, ցրտա-հարության և երաշտի ռիսկերից: Ապահովագ-րական համակարգի փորձնական ծրագրի ներդրման գործում որ-պես պետության կող-մից ցուցաբերվող աջակցության ձևաչափ նախատեսվում է կազ-մակերպչական աջակ-ցություն և ապահովա-գրական վճարի մաս-նակի սուբսիդավորում:		նությամբ)		ված այլ միջոցներ	

Միջոցառման անվանումը	Միջոցառման նկարագիրը	Ակնկալվող արդյունքը	Պատասխանատու կատարողները և համակատարողները	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը	Ֆինանսավորումը
11.Հակակարկտային պաշտպանության նոր՝ հրթիռային եղանակի ներդրման պիլոտային ծրագրի իրականացում	Արագածոտնի ռադիոլոկացիոն կայանի արդիականացում, ՀՀ Արագածոտնի և Արմավիրի մարզերում 3 հատ հրթիռային արձակիչ կայանի տեղադրում, կառավարման համակագի տեղադրում, 120 հատ «AC» տեսակի հակակարկտային հրթիռների ձեռքբերում:	Հրթիռային հակակարկտային պաշտպանության համակարգի ստեղծումը կնպաստի գյուղատնտեսական արտադրանքի կորուստների նվազեցմանը և գյուղատնտեսությունում տնտեսավարողների գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծմանը, եկամուտների ավելացմանը և գյուղում աղքատության հաղթահարմանը, հնարավորություններ կստեղծի գյուղատնտեսության առկա ռեսուրսային ներուժի օգտագործման և շուկայի պահանջներին համապատասխան արտադրության ծավալների ապահովման համար, կխթանի հանրապետության գյուղատնտեսության հետագա զարգացումը, արդյունավետության ու մրցունակության բարձրացումը և արդյունքում՝ կնպաստի երկրի պարենային	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարա-րություն	2017 թ.	ՀՀ պետական բյուջե, պահուստային ֆոնդ	ՀՀ կառավարության 11.05.2017թ. N 533-Ն որոշմամբ ՀՀ 2017 թվականի պետական բյուջեով նախատես-ված ՀՀ կառավարության պահուս-տային ֆոնդից ՀՀ արտա-կարգ իրավի-ճակների նախարարությանը հատ-կացվել է 75,949.4 հազ. դրամ

Միջոցառման անվանումը	Միջոցառման նկարագիրը	Ակնկալվող արդյունքը	Պատասխանատու կատարողները և համակատարողները	Կատարման ժամկետը	Ֆինանսա-վորման աղբյուրը	Ֆինանսավորումը
		անվտանգության հիմնախնդրի աստիճանական լուծմանը:				